DHCS
CALIFORNIA DEPARTMENT OF
HEALTH CARE SERVICES

Medi-Cal

FAQ «Medi-Cal Managed Care»-ի առողջապահական ծրագրերի փոփոխության մասին

Ինչու՞ են որոշ շրջաններում «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը փոխվում:

California-ն փոփոխություններ է կատարում «Medi-Cal»-ում, որպեսզի Դուք կարողանաք ստանալ առողջ կյանք ապրելու համար անհրաժեշտ խնամքը:

2024 թվականին «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը պետք է համապատասխանեն որակի, մատչելիության, հաշվետվության և թափանցիկության նոր կանոններին: Դա կապահովի, որ ողջ նահանգում մեր անդամներն օգտվեն բոլոր առողջապահական ծրագրերի կողմից ժամանակին ու բարձր մակարդակով տրամադրվող խնամքից:

«Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագրում կատարվող փոփոխությունը կազդի՞ «Medi-Cal»-ի իմ ապահովագրության վրա:

Ոչ: Եթե անգամ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը փոխվի, «Medi-Cal»-ի Ձեր ապահովագրությունը և նպաստները նույնը կմնան:

Ինչպե՞ս իմանամ, որ «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագիրը փոխվում է:

Պարզե՛ք, թե արդյոք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը փոխվելու է:

Ես ի՞նչ պիտի անեմ, եթե այնպիսի մի շրջանում եմ ապրում, որտեղ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը փոխվում են:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը փոխվում է.
Եթե Ձեր շրջանում «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը փոխվում են, հնարավոր է, որ Դուք ստիպված լինեք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրել:

Ավտոմատ անդամագրումը.
Որոշ շրջաններում Դուք ավտոմատ կերպով կընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում, և կարիք չի լինի ընտրելու:

Մանրամասներ հոգեբանական խնամք ստացող երեխաների և երիտասարդ անդամների համար

Ինչպե՞ս «Medi-Cal»-ն ինձ տեղյակ կպահի «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագրում տեղի ունեցած փոփոխության մասին:
Դա կախված է այն բանից, թե որ շրջանում եք Դուք ապրում: Ստորև կարող եք կարդալ տեղեկություններն ըստ նահանգների:

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը փոխվում է.

«Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի ընտրություն առաջարկող շրջանները Աշխարհագրական կառավարվող բուժսպասարկումը (Geographic Managed Care) (GMC), երկծրագիր և տարածքային շրջանները)՝

- Alpine
- Amador
- Calaveras
- El Dorado
- Fresno
- Inyo
- Kern
- Kings
- Los Angeles
- Madera
- Mono
- Riverside
- Sacramento
- San Bernardino
- San Diego
- San Francisco
- San Joaquin
- Santa Clara
- Stanislaus
- Tulare
- Tuolumne

Եթե Դուք ապրում եք վերը թվարկված շրջաններից մեկում, և «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը փոխվում է, ապա հնարավոր է, որ Դուք նամակ ստանաք.

- **Հոկտեմբեր 2023 թ.:** Եթե այժմ դուք «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագրում եք ընդգրկված, որը 2023 թ. վերջում հեռանալու է շրջանից, ապա «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը Ձեզ նամակ կուղարկի ու կհայտնի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի փոփոխության մասին:

- **Նոյեմբեր և դեկտեմբեր 2023 թ.:** «Medi-Cal»-ն ավելի մանրամասն նամակներ կուղարկի Ձեզ՝
  - «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրերին անդամագրվելու,
  - Ձեզ հասանելի նոր տարբերակների մասին:

Եթե Դուք պետք է «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրեք.
Դուք «Ընտրության փաթեթ» կստանաք, որի օգնությամբ «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր կընտրեք Ձեր շրջանում: Դուք պետք է «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրեք մինչև **2023** թ. **դեկտեմբերի 22-ը:** Եթե չընտրեք, ապա ավտոմատ կերպով կընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ նոր առողջապահական ծրագրում կամ «Medi-Cal Fee-For-Service»-ում (օրինակ՝ հոգետնային խնամք ստացող երեխաները կամ երիտասարդ անդամները):

- **Դեկտեմբեր 2023 թ.:** Այն բանից հետո, երբ Դուք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրեք կամ ավտոմատ կերպով ընդգրկվեք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրում, «Medi-Cal»-ը Ձեզ նամակ կուղարկի, որը տեղեկություններ կպարունակի «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի մասին:
- **Հունվար 2024 թ.:** «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը Ձեզ ողջույնի փաթեթ կուղարկի:

Միակ ծրագրով կամ Կազմակերպված շրջանային առողջապահական համակարգով (County-Organized Health System) (COHS) շրջանները.

- Alameda
- Butte
- Colusa
- Contra Costa
- Del Norte
- Glenn
- Humboldt
- Imperial
- Lake
- Lassen
- Marin
- Mariposa
- Mendocino
- Merced
- Modoc
- Monterey
- Napa
- Nevada
- Orange
- Placer
- Plumas
- San Benito
- San Luis Obispo
- San Mateo
- Santa Barbara
- Santa Cruz
- Shasta
- Sierra
- Siskiyou
- Solano
- Sonoma
- Sutter
- Tehama
- Trinity
- Ventura
- Yolo
- Yuba

Եթե Դուք ապրում եք այնպիսի շրջանում, որն անցնում է «Միակ ծրագրով» մոդելի կամ Կազմակերպված շրջանային առողջապահական համակարգով (COHS) մոդելի, ապա Դուք **ավտոմատ կերպով կընդգրկվեք** COHS ծրագրում, «Միակ ծրագրում» կամ «Kaiser Permanente»-ում:

- **Հոկտեմբեր 2023 թ.:** Եթե այժմ դուք «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագրում եք ընդգրկված, որը 2023 թ. վերջում հեռանալու է շրջանից, ապա «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը Ձեզ նամակ կուղարկի ու կհայտնի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի փոփոխության մասին:
- **Նոյեմբեր և դեկտեմբեր 2023 թ.:** «Medi-Cal»-ն ավելի մանրամասն նամակներ կուղարկի Ձեզ՝
  - «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրերին անդամագրվելու,
  - Ձեզ հասանելի նոր տարբերակների մասին:

- **Դեկտեմբեր 2023 թ.:** «Medi-Cal»-ը Ձեզ նամակ կուղարկի, որը տեղեկություններ կպարունակի Ձեզ ավտոմատ կերպով «Medi-Cal»-ի որևէ նոր առողջապահական ծրագրում կամ «Medi-Cal Fee-for-Service»-ում (FFS) (օրինակ՝ հոգետնային խնամք ստացող երեխաներին կամ երիտասարդ անդամներին՝ Միակ ծրագրով շրջաններում) ընդգրկելու մասին:
- **Հունվար 2024 թ.:** «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը Ձեզ ողջույնի փաթեթ կուղարկի:

Կարո՞ղ եմ ես պահել իմ բժշկին:

Եթե Ձեր բժիշկն ընդգրկված է «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրում.

Ձեր բժիշկը կարող է ընդգրկված լինել «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող նոր առողջապահական ծրագրերում: «Medi-Cal»-ի Ձեզ հասանելի առողջապահական ծրագրերի և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի հետ աշխատող բժիշկների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

Եթե Ձեր բժիշկն ընդգրկված չէ «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրում.

- Եթե անցյալ **12 ամիսների** ընթացքում Դուք այցելել եք «Medi-Cal»-ի մի բժշկի, որը «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրում ընդգրկված չէ, հնարավոր է, որ կարողանաք պահել Ձեր բժշկին, եթե «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրից չընդհատվող խնամք (continuity of care) խնդրեք:
- Չընդհատվող խնամքը նշանակում է, որ «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո Դուք կարող եք մինչև 12 ամիս պահել «Medi-Cal»-ի սպասարկողին: Դա վերաբերում է Ձեր նախնական բուժսպասարկման բժշկին (primary care doctor) (PCP), մասնագետներին, ֆիզիոթերապևտներին, աշխատաբույժներին և ուրիշներին:
- Ձեր բժիշկը կարող է համաձայնել աշխատակցել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ: Դա կարող է տևել մինչև 12 ամիս կամ, որոշ դեպքերում, ավելի երկար:
- Չընդհատվող խնամքը կարևոր է Ձեր առողջության և բարօրության համար: (Ծանուցում լրացուցիչ տեղեկությունների մասին)
- Եթե Ձեզ չընդհատվող խնամք է հարկավոր, «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրին անդամագրվելուց հետո զանգահարեք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի անդամների սպասարկման բաժին:

- «Medi-Cal»-ի Ձեզ հասանելի առողջապահական ծրագրերի և «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի հետ աշխատող բժիշկների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:

Եթե Ձեզ բժիշկ է հարկավոր.
Եթե Ձեր բժիշկը չհամաձայնի աշխատել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ, «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը կօգնի Ձեզ նոր բժիշկ գտնել:

Եթե «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագիրը փոխվի, կարո՞ղ եմ ես 2023 թ. հոկտեմբերից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը շարունակել մնալ «Խնամքի խորացված կառավարման» (Enhanced Care Management) (ECM) և «Համայնքային օժանդակության» ծրագրերում:
Այո: Այժմ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկված անդամները կարող են մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը շարունակել «Medi-Cal»-ի տվյալ առողջապահական ծրագրում գործող ECM-ի և «Համայնքային օժանդակության» ծրագրի իրենց անդամությունը:

Եթե ես «Medi-Cal»-ի նոր անդամ եմ, կարո՞ղ եմ 2023 թ. հոկտեմբերից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ն անդամագրվել «Խնամքի խորացված կառավարման» (ECM) և «Համայնքային օժանդակության» ծրագրերին:
Նայած՝ որ դեպքում: Միայն «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերն են ECM և «Համայնքային օժանդակություն» տրամադրում: Դրանք չեն գործում «Medi-Cal Fee-For-Service»-ում (FFS): Եթե Դուք այժմ անդամագրվեք «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագրի, Դուք ծրագրում կընդգրկվեք հաջորդ ամսվա առաջին օրը: Ծրագրում ընդգրկվելու օրվանից հետո Ձեզ հասանելի կլինեն ECM-ը և «Համայնքային օժանդակությունը»:

Եթե Դուք անդամագրվեք «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագրի, որը 2024 թ. հունվարի 1-ից նոր սկսում է գործել Ձեր շրջանում, ապա Դուք կմնաք «Medi-Cal» FFS-ում, մինչև «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը սկսի գործել 2024 թ. հունվարի 1-ից: Մինչև «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիրը չսկսի գործել, Դուք ECM և «Համայնքային օժանդակություն» չեք ստանա:

«Medi-Cal»-ի ներկայումս գործող առողջապահական ծրագրերի և 2024 թ. հունվարի 1-ից սկսվող «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարդացեք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի ցուցակն ըստ շրջանների:

Ի՞նչ է փոխվելու հոգետնային խնամք ստացող երեխաների և երիտասարդների համար:

Եթե Դուք ապրում եք ստորև նշված շրջաններից մեկում՝

- Butte
- Colusa
- Glenn
- Mariposa
- Nevada
- Placer
- Plumas
- San Benito
- Sierra
- Sutter
- Tehama
- Yuba

  - Ձեր շրջանն անցնում է «Կազմակերպված շրջանային առողջապահական համակարգի» (COHS) մոդելի:
  - Դուք պետք է անդամագրվեք «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող առողջապահական ծրագրին:
  - Դուք նոյեմբերին ու դեկտեմբերին նամակներ կստանաք «Medi-Cal»-ից, որոնք Ձեզ կհայտնեն այդ փոփոխության մասին:
  - Հունվարին Դուք ողջույնի փաթեթ կստանաք «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրից:
  - Կարևոր է նախնական բուժսպասարկման սպասարկող (PCP) ընտրել: «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը կարող է օգնել Ձեզ, որ ընտրեք:
  - Եթե Դուք այժմ PCP ունեք, հարկավոր է զանգահարել «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագիր և համոզվել, որ Ձեր բժիշկն աշխատում է «Medi-Cal»-ի Ձեր նոր առողջապահական ծրագրի հետ:

Եթե Դուք ապրում եք ստորև նշված շրջաններից մեկում՝

- Alpine
- El Dorado

  - Ձեր շրջանն անցնում է երկծրագիր մոդելի:
  - Եթե այժմ Դուք Fee-For-Service (FFS) «Medi-Cal»-ում եք, Դուք նամակ **չեք** ստանա 2023 թվականի վերջին: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում գտնվելը շարունակում է Ձեզ համար կամավոր լինել:
  - Եթե այժմ Դուք «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագրի կամավոր անդամ եք, որը 2024 թ. հունվարի 1-ից դադարելու է գործել Ձեր շրջանում, ապա հոկտեմբերին Դուք նամակ կստանաք «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագրից: Նամակում կասվի, որ հունվարից այն այլևս «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը չի լինելու:
  - Բացի այդ, Դուք նոյեմբերին ու դեկտեմբերին նամակներ կստանաք «Medi-Cal»-ից, որոնք Ձեզ կհայտնեն այդ փոփոխության մասին:

- Դուք կամավոր անդամագրման փաթեթ կստանաք «Medi-Cal»-ից, որպեսզի «Medi-Cal»-ի՝ Ձեր շրջանում գործող որևէ առողջապահական ծրագիր ընտրեք, եթե ցանկանում եք «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրի անդամ լինել:
- Եթե Դուք «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագիր չընտրեք, ապա 2024 թ. հունվարի 1-ից կփոխադրվեք FFS «Medi-Cal»:

Եթե Դուք ապրում եք ստորև նշված շրջաններից մեկում՝

- Alameda
- Contra Costa
- Imperial
  - Ձեր շրջանն անցնում է միակ ծրագրով մոդելի:
  - Եթե այժմ Դուք Fee-For-Service (FFS) «Medi-Cal»-ում եք, Դուք նամակ **չեք** ստանա 2023 թվականի վերջին: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում գտնվելը շարունակում է Ձեզ համար կամավոր լինել:
  - Եթե այժմ Դուք «Medi-Cal»-ի այնպիսի մի առողջապահական ծրագրի կամավոր անդամ եք, որը 2024 թ. հունվարի 1-ից դադարելու է գործել Ձեր շրջանում, ապա հոկտեմբերին Դուք նամակ կստանաք «Medi-Cal»-ի այդ առողջապահական ծրագրից: Նամակում կասվի, որ հունվարից այն այլևս «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը չի լինելու:
  - Բացի այդ, Դուք նոյեմբերին ու դեկտեմբերին նամակներ կստանաք «Medi-Cal»-ից, որոնք Ձեզ կհայտնեն այդ փոփոխության մասին:
  - «Medi-Cal»-ի մի նոր առողջապահական ծրագրի անդամագրվելու համար զանգահարեք «Medi-Cal Health Care Options» (HCO)՝ երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը՝ 1-800-840-5032 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Կամ այցելեք **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:
  - Եթե Դուք «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր չընտրեք, կմնաք FFS «Medi-Cal»-ում: Միակ ծրագրով շրջաններում հոգետնային խնամք ստացող երեխաները և երիտասարդ անդամները մինչև 2025 թվականը կարիք չունեն անդամագրվելու «Medi-Cal»-ի որևէ ծրագրի:

Իմ «Medicare»-ը կփոխվի՞, եթե ես ունեմ և՛ «Medi-Cal», և՛ «Medicare» (կրկնակի իրավունակ եմ):

Ոչ, «Medicare»-ի Ձեր նպաստները և սպասարկողները **չեն** փոխվի, երբ «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագիրը փոխվի:

«Medicare»-ի Ձեր սպասարկողները՝

- Պարտադիր չէ, որ ընդգրկված լինեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի ցանցում, որպեսզի շարունակեն սպասարկել Ձեզ, սակայն պետք է «Medi-Cal»-ի անդամ լինեն:

- Չեն կարող Ձեզնից համավճարումներ, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումներ պահանջել, եթե Դուք «Medi-Cal»-ի անդամ եք:
- Համավճարումների, համատեղ ապահովագրության և չապահովագրված մասի վճարումների համար պետք է հաշիվ ուղարկեն «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին, եթե անգամ նրանք «Medi-Cal»-ի ցանցում ընդգրկված չեն:

Եթե հարցեր ունեք Ձեր «Medicare»-ի կամ «Medicare Advantage» ծրագրի մասին, զանգահարեք 1-800-MEDICARE կամ Ձեր «Medicare Advantage» ծրագրի անդամության քարտի վրա նշված համարով: Իմացեք ավելին:

PACE-ի և SCAN-ի առողջապահական ծրագրերը կփոխվե՞ն, եթե «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագիրը փոխվի:

Ոչ: Այդ ծրագրերը չեն փոխվի:

Program of All-Inclusive Care for the Elderly (PACE)

Senior Care Action Network (SCAN)

Կարող եք ավելին իմանալ այցելելով՝

Ինչպես անդամագրվել PACE-ի կամ SCAN-ի առողջապահական ծրագրի

Պաշտպանության ի՞նչ միջոցներ են գործում American Indian և Alaska Native անդամների համար այս փոփոխության ընթացքում:

Եթե Դուք Indian առողջապահական սպասարկող ունեք՝
American Indian/Alaska Native (AI/AN) անդամները կարող են ցանկացած ժամանակ առողջապահական ծառայություններ ստանալ հնդկացիական առողջապահական (Indian Health Care) սպասարկողից:

Օգնության համար դիմեք:

- տվյալ անդամի «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրին **կամ**
- «Medi-Cal Ombudsman»-ին
  - **Հեռախոս՝** 1-888-452-8609 (զանգն անվճար է)
  - **TTY՝** 711՝ California State Relay-ի համար
  - **Էլ. փոստ՝** MMCDOmbudsmanOffice@dhcs.ca.gov

Եթե Դուք ոչ հնդկացիական (Non-Indian) առողջապահական սպասարկող ունեք.
Այն AI/AN անդամները, որոնք խնամք են ստանում այնպիսի մի սպասարկողից, որն Indian Health Care Provider (IHCP) չէ, կարող են հնարավորություն ունենալ պահելու նույն սպասարկողին, եթե չընդհատվող խնամքի թույլտվություն ստանան:

Եթե չընդհատվող խնամքի թույլտվություն ստանալու հարցում օգնության կարիք ունեք, դիմեք «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրին:

Կառավարվող բուժսպասարկումից դուրս գալը.

- Որոշ շրջաններում AI/AN անդամները կարող են դուրս գալ կառավարվող բուժսպասարկման համակարգից:
- Այն շրջաններում, որտեղ անդամը չի կարող դուրս գալ, նա, միևնույն է, իրավունք ունի այցելելու IHCP-ի, եթե անգամ «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի անդամ չէ:
- Ավելին իմանալու համար՝
  - Կարդացեք Ծանուցումը լրացուցիչ տեղեկությունների մասին
  - Դիմեք «Health Care Options»-ին
    - **Հեռախոս՝** 1-800-840-5032
    - **Կայք՝ www.healthcareoptions.dhcs.ca.gov**

Ի՞նչ պետք է ես անեմ, եթե «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագրի փոփոխության մասին հայտնող նամակից բացի, փոստով դեղին ծրար եմ ստացել՝ «Medi-Cal»-ի ծրագրի թարմացման ձևաթղթով:

Նախ լրացրեք «Medi-Cal»-ի թարմացման ձևաթուղթը: Եթե մինչև «Medi-Cal»-ի թարմացման ձևաթղթի վրա տպագրված ամսաթիվը Դուք չթարմացնեք ծրագիրը, ապա կարող եք կորցնել Ձեր «Medi-Cal»-ը: «Պահպանեք Ձեր «Medi-Cal»-ը» կայքում Դուք տեղեկություններ կգտնեք այն մասին, թե ինչպես թարմացնեք Ձեր «Medi-Cal»-ը:

«Medi-Cal»-ի թարմացման ձևաթուղթը լրացնելուց հետո խնդրում ենք կարդալ «Medi-Cal»-ի նամակը «Medi-Cal»-ի Ձեր առողջապահական ծրագրի փոփոխության մասին: Ինչպես նկարագրված է վերը բերված FAQ-ում (տե՛ս «Ինչպե՞ս «Medi-Cal»-ն ինձ տեղյակ կպահի «Medi-Cal»-ի իմ առողջապահական ծրագրում տեղի ունեցած փոփոխության մասին:»), «Medi-Cal»-ի անդամները կա՛մ ավտոմատ կերպով կընդգրկվեն «Medi-Cal»-ի որևէ նոր առողջապահական ծրագրում կամ հնարավորություն կունենան ինքները «Medi-Cal»-ի նոր առողջապահական ծրագիր ընտրելու՝ կախված այն բանից, թե որ շրջանում են ապրում: Եթե Դուք պահպանեք «Medi-Cal»-ի Ձեր ապահովագրությունը, Դուք կընդգրկվեք «Medi-Cal»-ի որևէ նոր առողջապահական ծրագրում, եթե անգամ մինչև *«My Medi-Cal Choice»* փաթեթում նշված ամսաթիվն ինքներդ ծրագիր չընտրեք, որն ուժի մեջ կմտնի 2024 թ. հունվարի 1-ից:

«Medi-Cal»-ն ուղարկում է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերում տեղի ունեցող փոփոխությունների մասին նամակներն այն անձանց, որոնք նամակն ուղարկելու պահին (2023 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին)

անդամագրված են և իրավունակ «Medi-Cal»-ի համար: Եթե Դուք կորցնեք «Medi-Cal»-ի Ձեր ապահովագրությունը, և այն չվերականգնվի մինչև 2024 թ. հունվարի 1-ը, Դուք կարիք չունեք ոչինչ անելու՝ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրելու համար: Եթե Դուք «Medi-Cal»-ից ծանուցում ստանաք այն մասին, որ Ձեր ապահովագրությունն ավարտված է, խնդրում ենք «Վերսկսել Ձեր ապահովագրությունը» (Restart Your Coverage) կայքում լրացուցիչ տեղեկություններ կարդալ ապահովագրության Ձեզ հասանելի տարբերակների մասին:

Որտեղից կարող եմ ավելին իմանալ «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերի մասին:
Իմացեք ավելին «Medi-Cal» կառավարվող բուժսպասարկման առողջապահական ծրագրերի տարբերակների և նպաստների մասին:

Որտեղից կարող եմ լրացուցիչ տեղեկություններ ստանալ:
Այցելեք MCP-ի «Կապվեք մեզ հետ» կայքէջը: